ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բնական լեզվաբանության (քերականության) հիմնադրույթները մշակվել են անցյալ դարի 70-ական թվականներին՝ հիմանականում գերմանացի և ամերիկացի լեզվաբանների (Վ.Վուրցել, Վ.Դրեսլեր, Վ.Մայերթալեր, Դ.Ստեմի, Զ.Հայման և ուրիշներ) կողմից, որոնք իրենց տարբեր բնույթի ուսումնասիրություններում անդրադարձել են լեզվի թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական և թե՛ շարահյուսական կառուցվածքի խնդիրներին: Այսօր, սակայն, չկա միասնական և միանշանակ վերաբերմունք հիշյալ հիմնադրույթների նկատմամբ, քանի որ դրանք ընդհանուր առմամբ հակադրվում են մինչ այժմ լայն ճանաչում գտած կառուցվածքային լեզվաբանության սկզբունքներին: Մեր իրականության մեջ բնական լեզվաբանության ելակետային դրույթների վերլուծությամբ հանդես է եկել Գ.Զահուկյանը, որը դրական գնահատելով դրանք, հատկապես շեշտում է այն հանգամանքը, որ լեզվի կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված զարգացումը ձգտում է առավելագույն բնականության:[1]

Նշենք, որ բնական լեզվաբանության հիմքում ընկած են ինչպես Ա.Մեյեի, Ժ.Վանդրիեսի, Շ.Բալիի, այնպես ել է.Սեպիրի, Ն.Խոմսկու, Ռ.Յակոբսոնի և այլոց մի շարք հայտնի դրույթները, որոնք լրացվում են արդի լեզվաբանության և բնագիտության տվյալներով: Հիշյալ ուղղության հետևորդները գտնում են, որ լեզվի զարգացումը տեղի է ունենում միմյանց հակառակ գործող որոշակի միտումների հիման վրա, որոնք մասամբ են ընդհանրական և սահմանափակվում են ծագումնաբանական ընդհանրություններով: Այդ կերպ նրանք ելնում են բնական լեզուներին բնորոշ յուրահատկություններից , դրանց փոփոխություններն էլ դիտում են բնական: Ըստ Վ.Վուրցելի, բնական փոփոխությունները ոչ այլ ինչ են, քան նշույթավորված երևույթների

---

[1] Джаукян Г.Б., Универсальная теория языка.Пролегомены к субстанциональной лингвистике, М., 1999, с. 230.

վերածումը ոչ նշույթավորվածի:[2] Կարևոր է համարվում նաև արդի լեզվաբանության մեջ տարածում գտած այն տեսակետը, որ լեզվի համակարգի կարևորագույն առանձնահատկություններից մեկը նրա ոչ համասեռությունն է և լեզվական տարրերի համակցային փոխակերպումների ենթարկվելու ունակությունը: Լեզվի համակարգայնությունը դիալեկտիկ բնույթ ունի. ընդհատությունը նրանում առկա է անընդհատության կողքին, անհրաժեշտությունը ազատության և այդպիսով համակարգայնությունն անհնար է առանց ոչ համակարգայնության: Այսինքն՝ լեզվի գոյության և զարգացման հիմնական նախապայմանը նրա միաժամանակյա համատեռությունն ու ոչ համասեռությունն է: Միևնույն ժամանակ, լեզուն որպես հասարակական երևույթ նաև համակցական օրինաչափությունների ու կաղապարների հիման վրա գործող ինքնածին և ինքնակարգավորվող կառուցվածք է: Ինչպես նշում է Է.Սեպիրը, ցեղակից լեզուները կարող են հնչյունապես տարբեր լինել, բայց նրանց հնչյունական համակարգերի կաղապարները այնուամենայնիվ կհամընկնեն այնպես, որ մի լեզվի b,d,g հնչյուններին կարող են համապատասխանել մեկ այլ լեզվի p,t,k հնչյունները: Լեզվի կաղապարն, այսպիսով, հանդիսանում է մի անփոփոխ էություն, որը որոշում է սակայն, փոփոխությունների բնույթն ու ուղղությունը:[3] Ասենք նաև, որ լեզվական տարբեր գործընթացների կարգաբերվածությունն իր հերթին պայմանավորված է փոփոխությունների ազատությամբ , ինչը նշանակում է, թե միշտ չէ, որ հիշյալ փոփոխությունները ընթանում են ուղղագծորեն: Ըստ Ժ.Վանդրիեսի, բնական լեզուն երբեք չի կարող հասնել այնպիսի տրամաբանական կատարելության, ինչպիսին ունեն արհեստական լեզուները: Նա գտնում է նաև, որ պետք է տարբերել հնչյունական միտումներ և հնչյունա կան օրենքներ հասկացությունները, իսկ վերջինները նախորդների դրսևորման առանձին դեպքերն են: Լեզվաբանը նախ պետք է վերլուծի համապատասխան միտումների արդյունքները և հետո միայն որոշի այն միտումների էությունը,

---

[2] Wurzel W., Zur Erklärbarkeit sprachlichen Wandels, „Zeitschrift für Phonetik, Sprachwissenschaft und Kommunikationsforschung„ , 41, 4, 1988.

[3] Сепир Э., Язык, М., 1934, с.

որոնք պատճառ են դառնում տվյալ հետևանքների համար:[4]

Նշված միտումների էության բացահայտման համար կարևոր է այն հանգամանքի գիտակցումը, որ լեզվի ցանկացած համաժամանակյա փուլը բնութագրվում է համապատասխան համակարգի (հնչյունական, ձևաբանական, քերականական) նշույթավորված և ոչ նշույթավորված տարրերով: Ընդ որում, նշույթավորվածությունն արտահայտվում է գործառական առավել նվազ հաճախականությամբ, որի հետևանքով կոնկրետ համակարգում ունենում ենք, այսպես կոչված, „թույլ" վանդակներ, որոնք կարող են լեզվի զարգացման ընթացքում „ուժեղանալ" կամ վերածվել ոչ նշույթավորվածի՝ ըստ համակարգայնության ձգտման միտումի: Վերջինս էլ կներկայացնի տվյալ համակարգի զարգացման համապատասխան ուղղությունը: Լեզվի բնականությունը այստեղ արտահայտվում է այն բանում, որ համակարգի մի կողմում նշույթավորված վանդակների վերածումը ոչ նշույթավորվածի՝ նույնպիսի „թույլ" վանդակներ է առաջ բերում համակարգի հակառակ կողմում և այս անընդհատ փոփոխություններն են ապահովում ինչպես լեզվի զարգացումը, այնպես էլ նրա գոյությունը:

Որպես ասվածի ապացուց նշենք այն փաստը, որ եթե հնդեվրոպական լեզուների զարգացման վաղ շրջանում բաղաձայնական համակարգի նշույթավորված տարրեր են հանդես գալիս շրթնային պայթականները (ինչը հաստատվում է նախնական *p-ի թույլ լինելու հանգամանքով, ինչպես նաև *b-ի գործառական նվազ հաճախականությամբ), ապա ավելի ուշ այդպիսիք ունենք հետնալեզվայինների շարքում:[5] Եթե գերմաներենի Perfekt ժամանակաձևը նախկինում ունեցել է գործառական մեծ հաճախականություն, ապա ժամանակակից գերմաներենում այն բնութագրվում է նշույթավորվածությամբ (նվազ հաճախականությամբ): Նույնը կարելի է տեսնել նաև տարբեր լեզուների ձևաբանական հարացույցներում կամ շարահյուսական կառուցվածքներում: Այսինքն՝ ցանկացած լեզվի

---

[4] Вандриес Ж., Язык, М., 1937, с.116.
5 Hopper P. J., The "New Look' Indo-European phonology, "Orbis', 26, 1977.

համաժամանակային փուլը բնութագրվում է համապատասխան համակարգի նշույթավորված և ոչ նշույթավորված տարրերով:

Ընդհանուր առմամբ պետք է նկատի ունենալ, որ եթե լեզվի համաժամանակյա փուլը բնութագրող միտումները ուղղված են կոնկրետ համակարգի ներսում համամասնական հարաբերությունների ստեղծմանը, ապա տարաժամանակյա միտումները ընդհակառակը հակառակ ուղղությամբ գործելով, խոչընդոտում են դրան և արդյունքում լեզվի ցանկացած համաժամանակյա կտրվածքում ունենում ենք միայն հարաբերականորեն կայուն վիճակ:

Այսպիսով, լեզվի բնականությունը կայանում է առաջին հերթին նրա միաժամանակյա համակարգայնության և ոչ համակարգայնության մեջ, իսկ համակարգայնության, կատարելության հասնելու մշտական ձգտումը, որը ներկայացնում են համապատասխան միտումները, հանդիսանում է նրա զարգացումը: Այստեղ տանող ուժն, անշուշտ, լեզվի բովանդակային կողմն է, որն արտացոլում է մարդկային ճանաչողության զարգացումը և որպես մտավոր ուժ նյութականանում է լեզվական ձևերի միջոցով՝ փոխանցվելով սերնդե-սերունդ: Լեզվի համակարգի ներսում կրկին գործում են բնական օրենքներ, որոնք միաժամանակ բացառում են այստեղ բացարձակ հավասարակշռության ստեղծումը, ինչը համազոր է լեզվի մահացմանը, քանզի շարժումն է նրա գոյության հիմնական նախապայմանը: Պետք է նկատի ունենալ նաև, որ լեզվի արտահայտության և բովանդակային կողմերի զարգացման միտումները ձգտում են շրջանաձև անվերջության (ինչը ապացուցում էր դեռ Յ.Գրիմը), որը պայմանավորված է մարդու բնախոսական կարողություններիորոշակի սահմանափակվածությամբ: Այս ամենից հետևում է նաև, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում հիշյալ միտումները կարող են կրկնվել ձևիմաստային համարժեք կաղապարների և ծագումնաբանական-տիպաբանական նմանակների տեսքով: Լեզվական միավորների թե՝ արտահայտության, թե՝ բովանդակային կողմերը ենթարկվում են համարժեք տեղաշարժերի մի բևեռից մյուսը և այդ անվերջ փոփոխությունների ընթացքում տեսանելի են նրանց հետքերը: